ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/9

ք.Երևան

«15» 09 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Բեգլարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեխնիկական ստուգման և փորձաքննությունների ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1 636 000 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:1

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Տեխնիկական փորձաքննությունների
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7	կենտրոն» ՍՊԸ
ՖՆ աշխատակազմի գործառնական	ք.Երևան, Ազատության պող. 24- 306
վարչություն	«ՀայէկոնոմԲանկ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ
900011054013	163058801172
02647057	00144521
Էդգար Գեվորգյան	Լ. Բեգլարյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«15» 09 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության*						
Անվանում	**Տեխնիկական բնութագիր**	**Քանակ**	**Չ/Մ**	**Գումար /ՀՀ դրամ/**	**Մատուցման վայր**	**Մատուցման ժամկետ**
Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-1 **CPV՝ 50531120/2**	Կատարողը պետք է իրականացնի Պատվիրատուի կաթսայատների և կաթսայատեղակայանքների կաթսաների տեխնիկական անվտանգության փորձաքննություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1083-Ն որոշման /գլուխ՝ 5,8,9,11/ պահանջների: Պետք է ստուգվի կաթսայի հիդրավլիկ փորձարկում, օդափոխության, լուսավորության, էլ. հողանցման համապատասխանություն, կաթսաների ավտոմատ կառավարման համակարգի, հնոցի, չափիչ-ստուգիչ սարքերի համապատասխանություն, արգելող ցուցանակների առկայություն, հակահրդեհային վահանակների առկայություն համալրված հրդեհաշիջման գործիքներով, կրակմարիչների համապատասխանություն: Տրվելու է փորձաքննության եզրակացություն:	**1**	**դրամ**	**624 000**	ք. Երևան, Խորենացի 3 ք. Երևան, Խորենացի 7 ք. Երևան, Կոմիտաս 35 ք. Երևան, Իսակովի 10 ք. Երևան, Ահարոնյան 12/3 ք. Երևան, Մանթաշյան 55 ք. Երևան, Շինարարների 3/1 ք. Երևան, Մոլդովական 41/3 ք. Երևան, Անդրանիկի 37/1 ք. Երևան, Էրեբունու համայնք, Հյուսիսային փ. 6	Ծառայության մատուցումն իրականացվում է 2021 թվականի հոկտեմբերի 5-ից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում:

Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-2 CPV՝ 50531120/3	Կատարողը պետք է իրականացնի Պատվիրատուի կաթսայատների և կաթսայատեղակայանքների կաթսաների տեխնիկական անվտանգության փորձաքննություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1083-Ն որոշման /գլուխ՝ 5,8,9,11/ պահանջների: Պետք է ստուգվի կաթսայի հիդրավլիկ փորձարկում, օդափոխության, լուսավորության, էլ. հողանցման համապատասխանություն, կաթսաների ավտոմատ կառավարման համակարգի, հնոցի, չափիչ-ստուգիչ սարքերի համապատասխանություն, արգելող ցուցանակների առկայություն, հակահրդեհային վահանակների առկայություն համալրված հրդեհաշիջման գործիքներով, կրակմարիչների համապատասխանություն: Տրվելու է փորձաքննության եզրակացություն:	1	**դրամ**	**192 000**	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հովսեփյան 1 Շիրակի մարզ, գ. Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4	Ծառայության մատուցումն իրականացվում է 2021 թվականի հոկտեմբերի 5-ից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում:
Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-3 CPV՝ 50531120/4	Կատարողը պետք է իրականացնի Պատվիրատուի կաթսայատների և կաթսայատեղակայանքների կաթսաների տեխնիկական անվտանգության փորձաքննություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1083-Ն որոշման /գլուխ՝ 5,8,9,11/ պահանջների: Պետք է ստուգվի կաթսայի հիդրավլիկ փորձարկում, օդափոխության, լուսավորության, էլ. հողանցման համապատասխանություն, կաթսաների ավտոմատ կառավարման համակարգի, հնոցի, չափիչ-ստուգիչ սարքերի համապատասխանություն, արգելող ցուցանակների առկայություն, հակահրդեհային վահանակների առկայություն համալրված հրդեհաշիջման գործիքներով, կրակմարիչների համապատասխանություն: Տրվելու է փորձաքննության եզրակացություն:	1	**դրամ**	**96 000**	Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց 11 Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մոսկովյան 44	Ծառայության մատուցումն իրականացվում է 2021 թվականի հոկտեմբերի 5-ից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում:

Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-4 CPV՝ 50531120/5	Կատարողը պետք է իրականացնի Պատվիրատուի կաթսայատների և կաթսայատեղակայանքների կաթսաների տեխնիկական անվտանգության փորձաքննություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1083-Ն որոշման /գլուխ՝ 5,8,9,11/ պահանջների: Պետք է ստուգվի կաթսայի հիդրավլիկ փորձարկում, օդափոխության, լուսավորության, էլ. հողանցման համապատասխանություն, կաթսաների ավտոմատ կառավարման համակարգի, հնոցի, չափիչ-ստուգիչ սարքերի համապատասխանություն, արգելող ցուցանակների առկայություն, հակահրդեհային վահանակների առկայություն համալրված հրդեհաշիջման գործիքներով, կրակմարիչների համապատասխանություն: Տրվելու է փորձաքննության եզրակացություն:	**1**	**դրամ**	**144 000**	Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սպանդարյան 24/1, 24/2 Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության 1 Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Սայաթ-Նովա 1/1	Ծառայության մատուցումն իրականացվում է 2021 թվականի հոկտեմբերի 5-ից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում:
Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-5 CPV՝ 50531120/6	Կատարողը պետք է իրականացնի Պատվիրատուի կաթսայատների և կաթսայատեղակայանքների կաթսաների տեխնիկական անվտանգության փորձաքննություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1083-Ն որոշման /գլուխ՝ 5,8,9,11/ պահանջների: Պետք է ստուգվի կաթսայի հիդրավլիկ փորձարկում, օդափոխության, լուսավորության, էլ. հողանցման համապատասխանություն, կաթսաների ավտոմատ կառավարման համակարգի, հնոցի, չափիչ-ստուգիչ սարքերի համապատասխանություն, արգելող ցուցանակների առկայություն, հակահրդեհային վահանակների առկայություն համալրված հրդեհաշիջման գործիքներով, կրակմարիչների համապատասխանություն: Տրվելու է փորձաքննության եզրակացություն:	**1**	**դրամ**	**240 000**	Տավուշի մարզ, ք. Իջևան, Անկախության 12 Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69	Ծառայության մատուցումն իրականացվում է 2021 թվականի հոկտեմբերի 5-ից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում:

Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-6 CPV՝ 50531120/7	Կատարողը պետք է իրականացնի Պատվիրատուի կաթսայատների և կաթսայատեղակայանքների կաթսաների տեխնիկական անվտանգության փորձաքննություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1083-Ն որոշման /գլուխ՝ 5,8,9,11/ պահանջների: Պետք է ստուգվի կաթսայի հիդրավլիկ փորձարկում, օդափոխության, լուսավորության, էլ. հողանցման համապատասխանություն, կաթսաների ավտոմատ կառավարման համակարգի, հնոցի, չափիչ-ստուգիչ սարքերի համապատասխանություն, արգելող ցուցանակների առկայություն, հակահրդեհային վահանակների առկայություն համալրված հրդեհաշիջման գործիքներով, կրակմարիչների համապատասխանություն: Տրվելու է փորձաքննության եզրակացություն:	1	**դրամ**	**96 000**	Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Պռոշյան 29 Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Նար-Դոս 11	Ծառայության մատուցումն իրականացվում է 2021 թվականի հոկտեմբերի 5-ից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում:
Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-7 CPV՝ 50531120/8	Կատարողը պետք է իրականացնի Պատվիրատուի կաթսայատների և կաթսայատեղակայանքների կաթսաների տեխնիկական անվտանգության փորձաքննություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1083-Ն որոշման /գլուխ՝ 5,8,9,11/ պահանջների: Պետք է ստուգվի կաթսայի հիդրավլիկ փորձարկում, օդափոխության, լուսավորության, էլ. հողանցման համապատասխանություն, կաթսաների ավտոմատ կառավարման համակարգի, հնոցի, չափիչ-ստուգիչ սարքերի համապատասխանություն, արգելող ցուցանակների առկայություն, հակահրդեհային վահանակների առկայություն համալրված հրդեհաշիջման գործիքներով, կրակմարիչների համապատասխանություն: Տրվելու է փորձաքննության եզրակացություն:	1	**դրամ**	**144 000**	Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Նարեկացի 8/3 Սյունիքի մարզ, Կարճևան համայնք, Մայրուղի 4 Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մինասյան 20ա	Ծառայության մատուցումն իրականացվում է 2021 թվականի հոկտեմբերի 5-ից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում:

Փորձաքննության ծառայություններ CPV՝ 50531140/10	Կատարողը պետք է իրականացնի Պատվիրատուի վերելակների փորձաքննություն համաձայն ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշման, որոշման: Պետք է ստուգվի հորանի մեքենայական սրահի համապատասխանությունը, բեռամբարձ մեխանիզմի, արգելակային մեխանիզմի, խցիկի դռների բացման մեխանիզմի համապատասխանություն: Տրվելու է փորձաքննության եզրակացություն:	1	դրամ	100 000	ք. Երևան, Խորենացի 7ա ք. Երևան, Կոմիտաս 35 ք. Երևան, Իսակովի 10 ք. Երևան, Դեղատան 3	Ծառայության մատուցումն իրականացվում է 2021 թվականի հոկտեմբերի 5-ից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում:

Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի՝ շահագործվող ԱՎՕ-ները ենթակա են տեխնիկական անվտանգության փորձաքննության տարեկան առնվազն մեկ անգամ:

Տեխնիկական ստուգման փորձաքննության եզրակացության տրամադրման ժամկետը՝ փորձաքննության ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011054013
02647057
Էդգար Գեվորգյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ
ք.Երևան, Ազատության պող. 24- 306
«ՀայէկոնոմԲանկ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ
163058801172
00144521
Լ. Բեգլարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Ց Ա Ն Կ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների (ԱՎՕ)

Գտնվելու վայրը, հասցեն,	ԱՎՕ-ի անվանումը	ԱՎՕ-ի ռեեստրում գրանցման համարը
Կաթսայատներ և կաթսայատեղակայանքներ		
ք. Երևան, Խորենացի 3	Կաթսայատուն ("BAXI" մոդելի, "TECHNIS EASY 1" տիպի, 291 Կվտ ջերմային հզորությամբ ջրատաքացուցիչ կաթսա)	8/1-1762
ք. Երևան, Խորենացի 7	Կաթսայատուն ("Մեկուսիչ" մոդելի, "ԱՏԱ 250" տիպի, 2 հատ 250 Կվտ ջերմային հզորությամբ ջրատաքացուցիչ կաթսաներ)	3/1-0349
ք. Երևան, Կոմիտաս 35	Կաթսայատուն ("Մեկուսիչ" մոդելի, "ԱՏԱ 200" տիպի, 2 հատ 200 Կվտ ջերմային հզորությամբ ջրատաքացուցիչ կաթսաներ)	8/1-1472
ք. Երևան, Իսակովի 10	Կաթսայատուն ("BAXI" մոդելի, "K-250" տիպի, 250 Կվտ ջերմային հզորությամբ և "K-90" տիպի 90 Կվտ ջերմային հզորությամբ ջրատաքացուցիչ կաթսաներ)	8/1/4160
ք. Երևան, Ահարոնյան 12/3	Կաթսայատեղակայանք թիվ 1 (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Ferroli մոդելի, 32 Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12795
ք. Երևան, Ահարոնյան 12/3	Կաթսայատեղակայանք թիվ 2 (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Ferroli մոդելի, 32 Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12796
ք. Երևան, Մանթաշյան 55	Կաթսայատեղակայանք (4 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Valman Super Star մոդելի, 32 Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12797
ք. Երևան, Շինարարների 3/1	Կաթսայատեղակայանք թիվ 1 (3 հատ ջրատաքացուցիչ կաթսա, ITALTHERM մոդելի, 24Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12798
ք. Երևան, Շինարարների 3/1	Կաթսայատեղակայանք թիվ 2 (3 հատ ջրատաքացուցիչ կաթսա, ITALTHERM մոդելի, 24Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12799
ք. Երևան, Մոլդովական 41/3	Կաթսայատեղակայանք (3 հատ ջրատաքացուցիչ կաթսա, WALLCON մոդելի, 36Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12800
ք. Երևան, Անդրանիկի 37/1	Կաթսայատեղակայանք թիվ 1 (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Squirrel մոդելի, 32Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12801

ք. Երևան, Անդրանիկի 37/1	Կաթսայատեղակայանք թիվ 2 (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Squirrel մոդելի, 32Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12802
ք. Երևան, Էրեբունու համայնք, Հյուսիսային փ. 6	Կաթսայատեղակայանք (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Ariston մոդելի, 32Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12803
Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հովսեփյան 1	Կաթսայատեղակայանք թիվ 2 (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Valman մոդելի, 32Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12804
Շիրակի մարզ, գ. Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4	Կաթսայատեղակայանք թիվ 1 (5 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Schuster մոդելի, 24 Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12805
Շիրակի մարզ, գ. Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4	Կաթսայատեղակայանք թիվ 2 (3 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Schuster մոդելի, 24 Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12806
Շիրակի մարզ, գ. Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4	Կաթսայատեղակայանք թիվ 3 (3 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Schuster մոդելի, 24 Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12807
Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց 11	Կաթսայատեղակայանք (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, KBY-0,05 մոդելի, 50 Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12808
Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մոսկովյան 44	Կաթսայատեղակայանք (3 հատ ջրատաքացուցիչ կաթսա, BAXI մոդելի, 28 Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12809
Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սպանդարյան 24/1, 24/2	Կաթսայատեղակայանք (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, BAXI մոդելի, 32 Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12810
Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Սայաթ-Նովա 1/1	Կաթսայատեղակայանք (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Fondital մոդելի, 32Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12819
Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության 1	Կաթսայատեղակայանք (4 հատ ջրատաքացուցիչ կաթսա, BAXI մոդելի, 32 Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12811
Տավուշի մարզ, ք. Իջևան, Անկախության 12	Կաթսայատեղակայանք թիվ 1 (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Ariston նոդելի, 32Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12812
Տավուշի մարզ, ք. Իջևան, Անկախության 12	Կաթսայատեղակայանք թիվ 2 (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Ariston նոդելի, 32Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12813
Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69	Կաթսայատեղակայանք թիվ 1 (4 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Shuster մոդելի, 32Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12814

Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69	Կաթսայատեղակայանք թիվ 2 (3 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Shuster մոդելի, 32Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12815
Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69	Կաթսայատեղակայանք թիվ 3 (3 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Helman մոդելի, 24Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12816
Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Նար-Դոս 11	Կաթսայատեղակայանք (3 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Mercuri մոդելի, 26Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12817
Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Պռոշյան 29	Կաթսայատեղակայանք (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Squirrel մոդելի, 32Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12820
Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մինասյան 20ա	Կաթսայատեղակայանք (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Valman մոդելի, 36Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12818
Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Նարեկացի 8/3	Կաթսայատեղակայանք (2 հատ ջրատաքացուցիչ կաթսա, Mira gren մոդելի, 32Կվտ ջերմային հզորությամբ)	8/1-12821
ՀՀ Սյունիքի մարզ, Կարճևան համայնք, Մայրուղի 4	Կաթսայատուն ("ERENSAN" մոդելի, "IA R 130" տիպի, 2 հատ 130 000 կկալ/ժ ջերմային հզորությամբ ջրատաքացուցիչ կաթսաներ)	8/1/3204
Վերելակներ		
ք. Երևան, Խորենացի 7ա	Մարդատար վերելակ, բեռնամբարձությունը՝ նոմինալ 320 կգ	6/1-0320
ք. Երևան, Կոմիտաս 35	Մարդատար վերելակ, բեռնամբարձությունը՝ նոմինալ 400 կգ	6/2-0031
ք. Երևան, Իսակովի 10	Մարդատար վերելակ բեռնամբարձությունը՝ նոմինալ 320 կգ	8/1/4158
ք. Երևան, Իսակովի 10	Մարդատար վերելակ բեռնամբարձությունը՝ նոմինալ 320 կգ	8/1/4159
ք. Երևան, Դեղատան 3	Մարդատար վերելակ բեռնամբարձությունը՝ նոմինալ 500 կգ	6/1-0322
ք. Երևան, Դեղատան 3	Մարդատար վերելակ բեռնամբարձությունը՝ նոմինալ 500 կգ	6/1-0322-1

Հավելված N 2
«15» 09 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/9 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հավերով սատեսված փաբաժնի համարը	բյուջետային ծախսերի տնտես. դասակ. հոդվածը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՊԵԿ 2021թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում			
				հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	4241	50531120/2	Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-1	624000	624000	624000	624000
2		50531120/3	Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-2	192000	192000	192000	192000
3		50531120/4	Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-3	96000	96000	96000	96000
4		50531120/5	Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-4	144000	144000	144000	144000
5		50531120/6	Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-5	240000	240000	240000	240000
6		50531120/7	Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-6	96000	96000	96000	96000
7		50531120/8	Կաթսայատան հակահրդեհային փորձաքննության ծառայություն-7	144000	144000	144000	144000

8			Փորձաքննության ծառայություններ	100000	100000	100000	100000

արման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
900011054013
02647057
Էդգար Գեվորգյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Տեխնիկական փորձաքննությունների
կենտրոն» ՍՊԸ
ք.Երևան, Ազատության պող. 24- 306
«ՀայէկոնոմԲանկ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ
163058801172
00144521
Լ. Բեգլարյան

(ստորագրություն)

Հավելված 3
«15» 09 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/9 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
00144521

Հավելված 3.1
« 15 » 09 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/9 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն